ՀՏԴ 339.5(479.243) Տնտեսագիտություն

ԱՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանուշ Մինասյան

Հիմնաբառեր. *արտաքին տնտեսական քաղաքականություն, արտահանման ներուժ, արտահանման արդյունավետություն, արտահանման ծավալ, տնտեսության բացություն, արտահանման ապրանքային կառուցվածք, արտաքին առևտրային տեղեկատվություն*

Ключевые слова*: внешнеэкономическая политика, экспортный потенциал, эффективность экспорта, объем экспорта, открытость экономики, структура экспортных товаров, информация о внешней торговле*

Key words*: foreign economic policy, export potential, export efficiency, export volume, economy openness, export commodity structure, foreign trade information*

НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ЭКСПОРТНОЙ ПОЛИТИКИ РА

М. МИНАСЯН

На современном этапе развития экономики, когда Республика Арцах вошла в новую фазу структурных и экономических реформ, важное место отводится проблеме совершенствования внешней политики государства в вопросах продвижения экспорта и государственной политики в направлении специализации страны. Несмотря на то, что в 1995г. правительство АР приняло политику либерализации внешней торговли с целью проложить путь для создания открытой экономики для вовлечения и интеграции нашей страны во всемирную экономику, однако множество политических, экономических и других ограничений воспрепятствовали процессу, фактически лишив наше государство возможности вести самостоятельную экономическую политику.

Тем не менее, используя возможности, предоставляемые РА, необходимо определить основные направления стимулирования экспорта и повышения внешней конкурентоспособности страны, для чего чрезвычайно важно провести ряд фундаментальных анализов.

В статье проанализирована динамика показателей экспортного потенциала за последние 10 лет и выработаны рекомендации по разработке развития экспортной политики.

DIRECTIONS OF DEVELOPMENT OF THE EXPORT POLICY OF AR

M. MINASYAN

At the present stage of economy development, when Artsakh Republic is involved into a new phase of structural and economic reforms, the importance is given to the issue of improvement of state policy in such spheres as foreign economic policy, promotion of export and state policy specialization .

In spite of the fact that in 1995 the government of AR has adopted a policy of foreign trade liberalization aimed at paving the way for the creation of open economy, as well as involvement and integration of our country into the world economy, however a set of political, economic and other constraints have prevented the process by depriving our state of the opportunity to conduct independent economic policy.

Nevertheless, using the opportunities given by RA it is necessary to define the main directions of stimulation of export and increase of external competitiveness of the country. For this purpose it is extremely important to carry out a number of fundamental analyses.

In the article the dynamics of indicators of the export potential for the last 10 years is analyzed and recommendations about development of export policy are elaborated.

Տնտեսական զարգացման ներկա փուլում, երբ Արցախի Հանրապետությունը թևակոխում է տնտեսական և կառուցվածքային վերափոխումների նոր շրջափուլ, կարևորվում է պետության արտաքին տնտեսական, արտահանման աճի խթանման ու երկրի մասնագիտացման ուղղությամբ պետական քաղաքականության կատարելագործման խնդիրը: Չնայած 1995թ. ԱՀ կառավարությունը որդեգրել է արտաքին առևտրի

ազատականացման քաղաքականություն՝ նպատակ ունենալով ուղի հարթել <<բաց>> տնտեսության ստեղծման, համաշխարհային տնտեսության մեջ մեր երկրի ներգրավման ու ինտեգրման համար, սակայն քաղաքական, տնտեսական և բազմաթիվ այլ սահմանափակումներ խաթարեցին գործընթացը՝ փաստացի զրկելով մեր երկրին ինքնուրույն տնտեսական քաղաքականություն ունենալու հնարավորությունից:

Այդուհանդերձ, ՀՀ ընձեռած հնարավորություններն օգտագործելով անհրաժեշտ է իստակեցնել արտահանման խթանման, երկրի արտաքին մրցունակության բարձրացման հիմնական ուղղությունները, որի համար չափազանց կարևորվում է հիմնարար վերլուծությունների իրականացումը:

Հոդվածում վերլուծվել են արտահանման ներուժի բացահայտմանն առնչվող վերջին 10 տարիների ցուցանիշների դինամիկան, կատարվել արտահանման քաղաքականության զարգացմանն ուղղված առաջարկություններ:

Արցախի Հանրապետությունը ինքնիշխան և ազատ երկիր է արդեն քառորդ դարից ավել: Դեռևս 1995թ. այն հռչակվել է որպես ազատական տնտեսություն, շուկայական տնտեսություն կառուցող երկիր, ինչը ենթադրում է «տնտեսության բացություն» և իրացվում ազատական առևտրային քաղաքականության միջոցով:

Արցախում տնտեսական ինքնուրույնության և ինքնիշխանության ճշգրիտ ընկալում կա. տնտեսական ինքնուրույնությունը կարող է իրականացվել խորը և լայնածավալ ինտեգրման պայմաններում: Չնայած դրան, Արցախի Հանրապետությունը շարունակում է գոյատևել՝ փաստացի չունենալով լիարժեք արտաքին տնտեսական քաղաքականություն:Չունենալով միջազգային հանրության կողմից ճանաչված պետական սահմաններ՝ ԱՀ-ը մաքսային սահմաններ չունի և արտաքին հատվածի հաշվառումն արդեն շուրջ երկու տասնյակ է իրականացնում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին և ԱՀ հսկիչ կետերով իրականացվող հաշվառման(հավաքագրվում են նաև վիճակագրական հաշվետվություններ) միջոցով:

Նման քաղաքական և տնտեսական սահմանափակումներն անշուշտ մեծ ազդեցություն են թողնում ԱՀ-ում իրականացվող արտաքին առևտրային քաղաքականության վրա, սակայն Արցախը շարունակում է ընթանալ տնտեսական մեխանիզմի լայնածավալ բարեփոխումների հռչակած ուղով: Վերջինս մի գործընթաց է, որն ընդգրկում է շուկայական տնտեսության պահանջներից բխող օրենսդրա-իրավական բազայի հիմքերի ստեղծումից մինչև դրանց կենսագործման բարենպաստ տնտեսական նախադրյալների ձևավորումը: Այս առումով Արցախի նման փոքր երկրների համար արտաքին շուկաների դերը բացառիկ է.համեմատաբար փոքր ներքին շուկան զուրկ է տնտեսական աճի բավարար պայմաններից, դրա ընդլայնումը նաև որակական պարամետրերի գերակայություն է ենթադրում:

Որպես զարգացող երկիր ԱՀ-ը պարտավոր է վարել արտաքին առևտրի խթանման այնպիսի քաղաքականություն, որն առավելագույն արդյունավետությամբ կօգտագործի արտաքին առևտրային քաղաքականության կարգավորման դասական լծակներն ու կառավարման մեխանիզմները: Արտաքին առևտրային կապերի՝ որպես տնտեսական աճի գործոնի ակտիվացումն հնարավոր չէ առանց պետության, նաև, շատ կարևոր է, Հայաստանի Հանրապետության անմիջական աջակցության: Չնայած ԱՀ-ում վերջին տարիներին իրականացվում է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, դրա արդյունավետությունը, բացառությամբ որոշ դեպքերի, դեռևս գոհացուցիչ չէ:

Անհրաժեշտ է իրականացնել ԱՀ արտահանման ներուժի գնահատում և այն ծառայեցնել ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը:

Արտահանման ներուժի գնահատման հիմքում ընկած է մրցունակությունը: Ըստ էության երկրի արտահանման ներուժը երկրի սոցիալ-տնտեսական և արտաքին տնտեսական համակարգերի բաղկացուցիչն է և ցուցադրում է երկրի՝ համաշխարհային շուկայում մրցունակ ապրանքներ, ծառայություններ ու տեխնոլոգիաներ իրացնելու կարողությունը:

Արցախի տնտեսության արտահանման ներուժով պայմանավորված է արտաքին շուկաներում հանդես գալու հեռանկարը, իսկ մրցունակությունը տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող իրավիճակն է, արդեն իրացված հնարավորություններն: Երկրի արտահանման արդյունավետությունը կարելի է գնահատել հետևյալ ցուցանիշների միջոցով.

1.երկրի արտահանման ծավալն ու դրա դինամիկան,
2.երկրի արտահանման բաժինը համաշխարհային արտահանման մեջ և դրա դինամիկան,
3.ապրանքախմբերի արտահանման բաժինը երկրի ընդհանուր արտահանման մեջ և դրա դինամիկան,
4.ըստ ապրանքախմբերի արտահանման ծավալներն ու դրանց դինամիկան,
5.արտահանման բաժինը ՀՆԱ-ում և դրա դինամիկան,
6.ըստ ապրանքախմբերի արտահանման բաժինները ՀՆԱ-ում և դրա դինամիկան,
7.բնակչության մեկ շնչին ընկնող արտահանումը,
8.տնտեսության բացության աստիճանը,
9.ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման ճկունությունը:

Աղյուսակ 1. ԱՀ արտահանման ծավալն ու դրա դինամիկան 2006-2016թթ.[1]

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը արտահանում հազ ԱՄՆ դոլար	45331	72549.6	55089.3	57341.2	74821.9	79577.8	57765.7	59636.4	64663.6	62082.2	81106.3
Աճի տեմպը	118,6	160,0	75.9	104.1	130.5	106.4	72,6	103.2	108.4	96,0	130.6

Բերված տվյալները վկայում են, որ 2006-2016թթ. ԱՀ արտահանման ծավալներն հիմնականում դրսևորում են աճի միտում, բացառությամբ 2008թ., 2012թ. և 2015թ.: Արտահանման աճի տեմպը ամենաբարձրը եղել է 2007թ.՝ 160,0 %, ինչը պայմանավորված է թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր/7,8անգամ/, փայտ և փայտյա իրեր/2,6անգամ/, հանքահումքային մթերքներ/19,6տոկոս/ ապրանքախմբերում արձանագրված աճերով: 2006թ. համեմատ 2016թ. ԱՀ արտահանման ծավալն աճել է 1,8անգամ, աճի միջին տարեկան տեմպը կազմել է 9,7%: Համեմատության համար նշենք, որ համաշխարհային արտահանման ծավալի աճի միջին տարեկան տեմպը 2006-2016թթ. կազմել է 6,9%, ՀՀ-ում՝5,7%, 2006-2008թթ.՝ համապատասխանաբար 22%, 3,3% և 18,2 %:

Համաշխարհային արտահանման մեջ երկրի արտահանման բաժինը և դրա դինամիկան թույլ են տալիս գնահատելու յուրաքանչյուր երկրի տեղի և դերի փոփոխությունները: Համաշխարհային արտահանման մեջ ՀՀ-ից արտահանման բաժինը փոքր է 1%-ից, ԱՀ բաժինը՝ աննշան:

[1] Տե'ս http://stat-nkr.am/files/yearbooks/2010-2016/21_Artar_276-291.pdf, http://stat-nkr.am/files/publications/9/Artarev2009year.pdf

Աղյուսակ 2. ՀՀ և ԱՀ արտահանման բաժինը համաշխարհային արտահանման մեջ և դրա դինամիկան 2006-2015թթ.[1]

Տարիներ	Համաշխարհային արտահանման ծավալը/մլրդ ԱՄՆ դոլար/	Աճի տեմպը %	ՀՀ արտահանման ծավալը /մլրդ դոլար/	Աճի տեմպը %	ԱՀ արտահանման ծավալը /մլրդ ԱՄՆ դոլար/	Աճի տեմպը %	Արտահանման բաժինը համաշխարհային արտահանման մեջ	
							ՀՀ	ԱՀ
2006	10333	117,1	0,9851	101,1	0,000045	118,6	0,0095	0.0000004
2007	12440	120,4	1,1523	117	0,000072	160	0,0093	0.0000005
2008	15970	128,4	1,0572	91,7	0,000055	75.9	0,007	0.0000003
2009	12460	78	0,7102	67,2	0.000057	104.1	0,006	0.0000005
2010	15140	121,5	1,0411	146,6	0.000074	130.5	0,007	0.0000005
2011	18150	119,9	1,3343	128,2	0.000079	106.4	0,007	0.0000004
2012	18170	100,1	1,3802	103,4	0.000057	72,6	0,008	0.0000003
2013	18790	103,4	1,4787	107,1	0.000059	103.2	0,009	0.0000003
2014	18690	99,5	1,5473	104.6	0.000064	108.4	0,008	0.0000003
2015	16300	87,2	1,4853	96,0	0.000062	96,0	0,009	0.0000004

Երկրի արտահանման ընդհանուր ծավալում առանձին ապրանքախմբերի բաժինների ուսումնասիրությունը թույլ է տալիս գաղափար կազմել երկրում արտահանման ապրանքային մասնագիտացման ուղղությունների մասին:

Աղյուսակ 3: Ըստ ապրանքախմբերի արտահանման ծավալների, ընդհանուր արտահանման մեջ դրանց բաժինների և արտահանման աճի տեմպերի դինամիկան[2]

	2006թ.			2011թ.			2012թ.		
	Արտահանման ծավալը	Աճի տեմպը,%	Բաժինը ընդհանուր արտահան-ման մեջ%	Արտահան-ման ծավալը	Աճի տեմպը,%	Բաժինը ընդհանուր արտահանման մեջ%	Արտահան-ման ծավալը	Աճի տեմպը,%	Բաժինը ընդհանուր արտահան-ման մեջ%
Կենդանի կենդանիներ և կենդանա-կան ծագման արտադրանք	1660.1	152.7	3.7	2091.3	94,5	2,6	2007.4	96,0	3,5
Բուսական ծագման արտադրանք	3587.8	83.9	7.9	5934.7	244,5	7,4	10197.7	171,8	17,6
Պատրաստի սննդի արտադրանք	4915.1	125,7	10.8	6608.4	115,3	8,3	5924.8	89,7	10,3
Հանքահում-քային մթերքներ	28652.3	2 անգամ	63.2	49403.8	92,2	62,1	24897.3	50,4	43,1
Թանկարժեք քարեր և մետաղներ	2690.4	24.6	5.9	5894.8	166,3	7,4	8072.3	136,9	14,0
Կոշկեղեն. հովանոցներ. գլխարկներ	1337.9	95.0	3.0	2311.2	149,2	2,9	1505.2	65,1	2,6

[1] Աղյուսակը կազմվել է՝ ԱՀ և ՀՀ արտաքին առևտուրն ըստ ապրանքախմբերի, www.armstat.am , http://stat-nkr.am/ տվյալների հիման վրա

[2] Տե՛ս www.armstat.am , http://stat-nkr.am/

	2013թ.			2014թ.			2015թ.			2016թ.		
	Արտահանման ծավալը	ԱՀ տեսակը,%	Բաժինը ընդհանուր արտահանման մեջ%	Արտահանման ծավալը	ԱՀ տեսակը,%	Բաժինը ընդհանուր արտահանման մեջ%	Արտահանման ծավալը	ԱՀ տեսակը%	Բաժինը ընդհանուր Արտահանման մեջ%	Արտահանման ծավալը	ԱՀ տեսակը%	Բաժինը ընդհանուր արտահանման մեջ%
Կենդանի կենդանիներ և կենդանական	1822.7	90,8	3,1	3218.2	176,6	2,7	4110.0	127,7	6,6	6031.9	146,8	7,4
Բուսական ծագման արտադրանք	6847.0	67,1	11,5	6124.2	89,4	6,6	6438.6	105,1	10,4	13944.9	2,2 անգամ	17,2
Պատրաստի սննդի արտադրանք	6933.5	117,0	11,6	5600.6	80,8	15,4	4706.3	84,0	7,6	4373.6	92,9	5,4
Հանքային մթերքներ	26572.5	106,7	44,6	33796.7	127,2	20,5	25256.2	74,7	40,7	35524.5	140,7	43,8
Ծանկարժեք թանկարժեքներ և մետաղներ	6487.7	80,4	10,9	5564.0	85,8	3,3	9673.0	173,8	15,6	11777.4	121,8	14,5
Կոշկեղեն, հագուստներ, գլխարկներ	1211.4	80,5	2,0	1989.9	164,3	1,0	1349.4	67,8	2,2	1825.4	135,3	2,2

Աղյուսակի տվյալների վերլուծությունից բխում է, որ ԱՀ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունի 6 ապրանքախումբ: 2006թ. ամենամեծ տեսակարար կշիռ ունեին հանքահումքային մթերքներն ու պատրաստի սննդի արտադրանքը: Հարկ է նշել, որ դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում հանքահումքային մթերքներն ամենաբարձր տեսակարար կշիռն ունեին, ընդ որում ցուցանիշը ամենաբարձրն էր 2006թ.՝ 63,2 %, ամենացածրը՝ 2014թ. 20,5%:

Դիտարկվող ժամանակահատվածում տեսակարար կշռով երկրորդ հորիզոնականում գրեթե բոլոր տարիներին բուսական ծագման արտադրանքն էր, որի տեսակարար կշիռը 2006թ. 7,9%-ից 2016թ. հասել է 17,2%-ի: Այս ապրանքախմբի փոփոխությունը հիմնականում հանրապետության բուսաբուծության արտադրանքի փոփոխությունն է արտացոլում: Դիտարկվող ժամանակահատվածում երկու անգամ աճել է նաև կենդանի կենդանիներ և կենդանական ծագման ապրանքախմբի տեսակարար կշիռը՝ արձանագրելով արտահանման ծավալի 3,6 անգամ աճ:

Մյուս կարևոր ցուցանիշը ըստ ապրանքախմբերի արտահանման ծավալներն ու դրանց դինամիկան է: Արցախից տարբեր ապրանքախմբերի արտահանման ծավալների աճի տեմպերը փոփոխության կայուն միտում չեն ցուցաբերել. տվյալները վկայում են, որ աճի տեմպերն երբեմն կտրուկ են լինում, երբեմն էլ աճի փոխարեն դիտարկվում է նվազման միտում: 2016թ. 2006թ. համեմատ աճել են ներկայացված 18ապրանքախմբերից 12-ի արտահանման ծավալները, ընդ որում 900 անգամ աճել են տրանսպորտային միջոցների, 34,7 անգամ քիմիական արտադրության ապրանքների, 29,4անգամ մեքենաներ և սարքավորումներ ապրանքախմբի ծավալները. աճի այսպիսի ցուցանիշները հիմնականում պայմանավորված է ելակետային(2006թ.) ցածր ցուցանիշներով: 2016թ. 2006թ համեմատ նվազել են պատրաստի սննդի արտադրանքի(11%-ով), կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրեր(43,5%-ով), ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից(94%-ով), թուղթ և թղթյա իրեր(98,8%-ով) ապրանքախմբերի արտահանման ծավալները: Արտահանման ծավալում ամենաբարձր տեսակարար կշիռն ունեցող հանքահումքային մթերքներ ապրանքախմբում դիտարկվող ժամանակահատվածում արձանագրվել է 24% աճ, ընդ որում 2013թ. համեմատ աճն ավելի բարձր է եղել(33,7%), իսկ միջին տարեկան աճը կազմել է 12,3 տոկոս:

Աղյուսակ 4. ԱՀ արտահանման ծավալների փոփոխությունները ըստ ապրանքախմբերի

Ապրանքախմբերը	2016թ 2006թ նկատմամբ (%)	2016թ 2011թ նկատմամբ (%)	2016թ 2013թ նկատմամբ (%)	Աճի միջին տարեկան տեմպը (%)
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	3.6 անգամ	2.9 անգամ	3.3 անգամ	35.5
Բուսական ծագման արտադրանք	3.9 անգամ	2.3 անգամ	2.0 անգամ	19.5
Յուղեր և ճարպեր	-	-	2.1 անգամ	7.8 անգամ
Պատրաստի սննդի արտադրանք	89.0	66.2	63.1	-6.3
Հանքահումքային մթերքներ	124.0	71.9	133.7	12.3
Քիմիական արտադրության ապրանքներ	34.7 անգամ	7.4 անգամ	195.0	47
Պլաստմասսա. կաուչուկ.ռետին	-	0.2	0.6	-65
Կաշի և դրանից իրեր	10.7 անգամ	102.4	94.7	3.0
Փայտ և փայտյա իրեր	2.0 անգամ	112.4	60.2	-1,5
Թուղթ և թղթյա իրեր	1.2	-	1.2	-45,7
Մանածագործական իրեր	5.5 անգամ	1.3	6.0 անգամ	219,6
Կոշկեղեն. հովանոցներ. գլխարկներ	136.4	79.0	150.7	12
Իրեր քարից. գիպսից. ցեմենտից	4.5 անգամ	75.3	47.2	15,7
Թանկարժեք քարեր և մետաղներ	4.8 անգամ	2.0 անգամ	1.8 անգամ	15,5
Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից	6.0	0.02	115.5	85
Մեքենաներ և սարքավորումներ	29.4 անգամ	3.4 անգամ	110.3	105,5
Տրանսպորտային միջոցներ	900 անգամ	93.8	34.2	96,7
Կահույք. խաղալիքներ. այլ պատրաստի իրեր	56.5	1.9 անգամ	2.2 անգամ	56,1

Երկրի արտահանման ներուժի գնահատման համար հաշվարկվում է նաև ՀՆԱ-ում արտահանման բաժինն ու այդ փոփոխությունները:

Գծապատկեր1.ԱՀ արտահանման բաժինը ԱՀ անվանական ՀՆԱ-ում 2006-2016թթ.(%)



Գծապատկերից հետևում է, որ արտահանման բաժինը ՀՆԱ-ում ամենաբարձրը եղել է 2007 թ և կազմել է 35,1%: Համեմատության համար նշենք, որ ՀՀ-ում այս ցուցանիշի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2004թ.՝ 19,4%, ինչը, սակայն 1,8 անգամ զիջում է ԱՀ ցուցանիշի մակարդակը: Հետագա տարիներին ՀՆԱ-ում արտահանման տեսակարար կշռի ցուցանիշը նվազել է՝ 2008-2011թթ. միջինում կազմելով 21,3%, իսկ 2012թ. սկսած տատանվել է 15%-ի սահմաններում (2012-2016թթ. միջին ցուցանիշ 15%): Պատճառը պարզ է. արտահանման աճի տեմպերը 2011թ. սկսած էականորեն նվազել են, այն դեպքում, երբ ՀՆԱ-ի աճի տեմպերը շարունակել են մնալ կայուն բարձր: Քննարկվող ցուցանիշը բարձր է հատկապես Ղազախստանում՝ 38,7%, Գերմանիայում 40,5%, Բելառուսում՝ 49%, Վրաստանում՝ 28,0%, ԵՄ ցուցանիշը 12,5% է:

Արտահանման խթանումը ենթադրում է արտահանման հիմքերի ստեղծում արտաքին ազդեցություններից հնարավորինս զերծ, ոչ փխրուն արտադրությունների վրա: Այս տեսանկյունից ԱՀ ձևավորված արտահանման կառուցվածքում առկա են նախատրամադիր ճյուղեր: Ներմուծվում են էներգակիրներ, սննդամթերք, կիսաֆաբրիկատներ և այլն: Արտադրության դրական միտումները զգացվում են ներմուծմանը փոխարինող գյուղմթերքի վերամշակող որոշ արտադրություններում:

Արտահանման բարձր տեմպեր ունենալու համար մասնավոր ներդրումների դերը վճռորոշ է: Արցախում ներկայումս փոքր են ներքին աղբյուրներից ներդրումներ կատարելու և արտաքին շուկա դուրս գալու հնարավորությունները գրավչության, անձնական և արտադրական կուտակման խիստ սահմանափակվածության պատճառով: Այս պարագայում չի կարելի թերագնահատել օտարերկրյա ուղղակի ներդրումների դերը արտահանման խթանման հարցում:

Ըստ ապրանքախմբերի արտահանման բաժինները ՀՆԱ-ում և դրանց դինամիկան ցույց են տալիս, թե հատկապես որ ապրանքախմբի արտահանման շնորհիվ է ավելացել երկրի ամբողջական արդյունքը: Այդ նպատակով վերլուծվել են այն ապրանքախմբերը, որոնց արտահանման տեսակարար կշիռը ԱՀ արտահանման ծավալում մեկ տոկոսից ավելի է: 2006-2016թթ. ՀՆԱ-ում համեմատաբար բարձր բաժին ունի <<հանքամուքային արտադրանքը>>՝ միջինը 11.4 %:

Աղյուսակ 5. Արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների բաժինները ՀՆԱ-ում 2006-2016թթ.

Տարի-ներ	Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	Բուսական ծագման արտադրանք	Պատրաս-տի սննդի արտա-դրանք	Հանքա-հումքային մթերքներ	Թանկար-ժեք քարեր և մետաղներ	Կոշկեղեն. հովանոցներ . գլխարկներ
2006	1,11	2,41	3,30	19,25	1,80	0,89
2007	0,82	1,53	3,58	16,60	0,10	0,94
2008	0,43	2,14	2,19	11,17	0,32	0,83
2009	0,83	1,26	1,59	13,68	1,18	1,04
2010	0,69	0,76	1,81	16,95	1,12	0,49
2011	0,57	1,63	1,82	13,58	1,62	0,64
2012	0,54	2,73	1,59	6,67	2,16	0,40
2013	0,44	1,66	1,68	6,46	1,58	0,29
2014	0,71	1,35	1,23	7,44	1,23	0,43
2015	0,94	1,47	1,07	5,77	2,21	0,31
2016	1,26	2,91	0,91	7,43	2,46	0,38

Բնակչության մեկ շնչին ընկնող արտահանման ծավալը 2006-2016թթ. ավելացել է, բացառությամբ նախաճգնաժամային տարիներից և 2015թ.: 2016թ. 2006թ. նկատմամբ մեկ շնչի հաշվով արտահանման ծավալը աճել է 229,4հազ. դոլարով կամ 69,7%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում արտահանման միջին աճի տարեկան տեմպը կազմել է 6,9%: Հետաքրքիր է ԱՀ այս ցուցանիշի դիտարկումը աշխարհի մի շարք երկրների համանման ցուցանիշների ընդհանուր կազմում, այսպես, Եվրոպական Միությունում բնակչության մեկ շնչին ընկնող արտահանման ծավալը 2014թ. կազմել է 4479 դոլար, Գերմանիայում՝ 19099 դոլար, ԱՄՆ-ում՝ 5049 դոլար, ՌԴ-ում՝ 3651 դոլար, Վրաստանում՝ 918,4 դոլար, ՀՀ-ում 503,6 դոլար:

Գծապատկեր 2. Բնակչության մեկ շնչի հաշվով ԱՀ արտահանումը 2006-2016թթ. ԱՄՆ դոլար



Գծապատկերում բերված թվերը վկայում են, որ մեկ բնակչի հաշվով ԱՀ արտահանման ցուցանիշը 8 անգամ զիջում է Եվրոպական Միության երկրների, 34,2 անգամ Գերմանիայի, 2007-2011թթ գերազանցել է ՀՀ ցուցանիշը՝ առավելագույնը 62,6տոկոսով:

Գծապատկեր 3[1] Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՀ և ԱՀ արտահանումը 2006-2016թթ. ԱՄՆ դոլար



ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման ճկունությունը գնահատվում է տնտեսության բացության մակարդակի փոփոխությունն արտացոլող գործակցի միջոցով, որը ցույց է տալիս, թե որքան կաճի արտահանումը, եթե ՀՆԱ-ն ավելանա 1%-ով: Տեսականորեն, եթե ճկունության գործակիցը 1-ից մեծ է, ապա կարող ենք ասել, որ երկրի տնտեսության բացության մակարդակը մեծանում է և հակառակը, փոքր լինելու դեպքում՝ տնտեսության բացությունը նվազում է: ԱՀ-ը մշտապես ձգտում է ավելացնել իր տնտեսության բացության մակարդակը, ինչը ենթադրում է համաշխարհային տնտեսությունը ինտեգրված, աշխատանքի միջազգային բաժանմանն ակտիվորեն մասնակցող, ներքին շուկայի բարձր հասանելիությամբ, միջազգային համագործակցության և գործարարության տարբեր ձևերն ու երկրի համեմատական առավելություններն արդյունավետ օգտագործող, օտարերկրյա կապիտալի, տեխնոլոգիաների ու տեղեկատվական ներհոսքը խթանող բարենպաստ ներդրումային մթնոլորտով տնտեսության ձևավորում: Այս համատեքստում չափազանց կարևորվում է արտահանման բազմազանեցման ապահովումը:

ԱՀ տնտեսության հետագա զարգացումը պահանջում է տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանն ուղղված ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում: Այդ նպատակով կարևորվում է մեր տնտեսության արտահանման ներուժի բացահայտումը և արդյունավետ իրագործումը: Պետությունը պետք է իրականացնի տնտեսության այն ճյուղերի արտադրության և արտահանման խթանումը, որոնք կապահովեն ԱՀ տնտեսության համեմատական առավելությունների և արտահանման բազմազանեցման իրացումը: ԱՀ մրցակցային առավելություններից է էկոլոգիապես մաքուր գյուղմթերքի արտադրությունը, որի հիման վրա անհրաժեշտ է զարգացնել վերամշակող արդյունաբերությունը, վերջինիս տեսակարար կշիռը արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում, սակայն, շարունակում է մնալ բավական ցածր(2016թ. տվյալներով 33,8տոկոս): ԱՀ-ը հարուստ է նաև ջրային ռեսուրսներով, որոնք ունեն էներգետիկ ներուժ, ինչն էլ այսօր արդյունավետորեն օգտագործվում է ԱՀ կառավարության կողմից:

Հաշվի առնելով ԱՀ ներկայիս կարգավիճակը, այն հանգամանքը, որ ԼՂԻՄ-ի ամբողջ արդյունաբերական նախկին համալիրը գրեթե ամբողջությամբ վերացել է(մասամբ պատերազմի, մասամբ՝սեփականաշնորհման և արտաքին կապերի բացակայության հիմքով), գյուղատնտեսությունը ևս գտնվում էր ծանր վիճակում և այսօր էլ աչքի է ընկնում ցածր արդյունավետությամբ, առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում կողմնորոշումը դեպի միջնաժամկետ հատվածում ներմուծման փոխարինման արդյունաբերական քաղաքականության իրականացումը, որից հետո, թերևս, կկարևորվի արտահանմանն ուղղված արդյունաբերական

[1] Տե՛ս http://ereport.ru/stat.php?razdel=country&count=armenia&table=execia, http://www.armstat.am/file/doc/99504388.pdf , http://www.armstat.am/file/doc/99504343.pdf

քաղաքականությունը: Մենք պետք է հաշվի առնենք նաև ՀՀ արտաքին առևտրի, հատկապես ներմուծման կառուցվածքը և ձգտենք առավելապես լրացնել ՀՀ ներքին պահանջարկը ԱՀ տնտեսության մրցունակ արտադրանքով:

Աղյուսակ 7. ԱՀ ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի 2016թ.[1] /հազ.ԱՄՆ դոլար/

Ապրանքախմբերը	2012	2013	2014	2015	2016
Կենդ.կենդանիներևկենդ.ծագման արտ-ք	14316,2	11659,4	8074,1	7211,8	7546,3
Բուսական ծագման արտադրանք	18289,1	20440,8	19990,7	17554,4	16600,4
Յուղեր և ճարպեր	3134,9	2862,7	2347,3	1636,0	1985,5
Պատրաստի սննդի արտադրանք	47206,7	43169,5	46613,8	40785,7	45559,2
Հանքահումքային մթերքներ	57235,4	57303,1	61978,9	50094,7	43315,1
Քիմիական արտադրության ապրանքներ	16648,4	19981,0	21212,9	18709,6	18678,0
Պլաստմասսա. կաուչուկ.ռետին	3119,7	3076,5	2629,1	1956,5	1600,9
Կաշի և դրանից իրեր	657,5	302,6	469,9	589,0	924,1
Փայտ և փայտյա իրեր	2551,2	2106,8	2458,3	1448,5	1131,7
Թուղթ և թղթյա իրեր	2241,0	2006,0	2002,4	1505,8	1240,0
Մանածագործական իրեր	12709,4	12957,9	19088,5	9268,8	8643,6
Կոշկեղեն. հովանոցներ. գլխարկներ	2651,3	2741,1	3048,8	1865,1	1522,8
Իրեր քարից. գիպսից. ցեմենտից	9686,4	6967,9	8481,8	5954,6	6130,4
Թանկարժեք քարեր և մետաղներ	9058,6	6755,8	10006,2	2543,2	15438,3
Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից	8366,2	8859,9	12030,8	9642,3	9297,7
Մեքենաներ և սարքավորումներ	29155,0	24511,2	29450,2	39343,8	23953,2
Տրանսպորտային միջոցներ	32060,3	23615,8	34523,6	22974,4	35111,0
Սարքեր և ապարատներ	1857,7	1180,9	1305,9	1402,9	1216,8
Կահույք.խաղալիքներ.այլպ ատրաստիիրեր	20289,8	18318,7	16245,6	17971,9	16947,1
Արվեստի ստեղծագործ. հնաոճ իրեր	11,7	15,6	28,1	15,9	17,1

Աղյուսակում բերված տվյալները, կարծում եմ, պետք է կանխորոշեն ԱՀ գյուղատնտեսության և արդյունաբերության ապրանքային կառուցվածքը:

Զափազանց կարևոր է նաև արտաքին շուկաներում պետության դերակատարության բարձրացումը, հատկապես ԱՀ նման երկրների համար, որոնք գրեթե չունեն արտաքին տնտեսական կապեր և կայացած գործարար հատված: Պետությունը պետք է արտահանողներին ապահովի տեղեկատվական, խորհրդատվական, մարքեթինգային և տեխնիկական աջակցությամբ: Արտահանողները առաջնահերթորեն ունեն արտաքին առևտրային տեղեկատվության կարիք, մասնավորապես գործընկեր երկրների արտաքին առևտրային գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերի, առևտրային ներկայացուցչությունների գործունեության, արտաքին շուկաներում ըստ առանձին ապրանքային խմբերի կոնյուկտուրայի, հայկական տարածքում գործող մասնագիտացված բանկերի և կազմակերպությունների, մաքսային գործում փոփոխությունների մասին:

[1] Տե՛ս http://stat-nkr.am/files/yearbooks/2010-2016/21_Artar_276-291.pdf

Որպես մաքսային սահման և այլ երկրների հետ արտաքին տնտեսական կապեր չունեցող երկիր՝ Արցախը պետք է առանձնակի ուշադրություն դարձնի իր արտադրանքի մրցունակության վրա, կարևոր է ներքին տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը, ՀՀ տնտեսությանը ինտեգրման աստիճանի բարձրացումը: Բնականաբար, արտահանումը պետք է շահավետ լինի և արտահանողների, և պետության համար, ինչն էլ ենթադրում է, որ արտահանման խթանմանն ուղղված միջոցառումների առումով պետության քաղաքականությունը պետք է լինի համակարգված: Իզուր չէ ասված, որ արտահանման խթանման ոլորտում խելամտորեն ներդրված յուրաքանչյուր լումա ետ է գնվում մի քանի անգամ ավելի արագ, քան այլ ոլորտում ներդրվածները:

Կարևորում ենք արտահանման նպատակային վարկավորման ներդրումը, ինչը կարելի է իրականացնել՝ հաշվի առնելով արտահանվող ապրանքների մշակման աստիճանն ու տեխնոլոգիարարությունը: Արտահանվող ապրանքների մրցունակությունը, մշակման աստիճանը բարձրացնելու համար հարկ է ընդլայնել գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Киреев А., Международная экономика, часть 1, Международные отошения, М., 1998
2. Кретов И.И., Внешнеторговое дело, М.,Дело,2006
3. Прытков Р.М и др., Формирование и развитие экспортного потенциала региона. Вестник Оренбургско государственного университета. N13/132/ 2011
4. http://stat-nkr.am
5. http://ereport.ru/stat.php?razdel=country&count=armenia&table=execia
6. http://www.armstat.am
7. www.worlbank.org
8. www.trademap.org

Տեղեկություններ հեղինակի մասին.

Մ.Մ.Մինասյան, տ.գ.թ., ԱրՊՀ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը: